



ՀԵՏՔ լրատվական կայք,
Լրագրող Ամալյա Մարգարյանին

Վեոլիա Հայաստանը՝ որպես կորպորատիվ պատասխանատու ընկերություն, հիմք ընդունելով քաղաքացիների կողմից բարձրացված դժգոհությունները, ընկերությունում սկսել է իրականացնել բարեփոխումներ և արդյունավետության բարձրացման աշխատանքներ՝ անցում կատարելով դեպի ավելի թափանցիկ գործելաոճի:

Մեր առջև դրված առաջնային նպատակներից է ոչ միայն բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը, այլև բարձրացնել ծառայությունների սպասարկման որակը՝ հոգ տանելով քաղաքացիների մասին: Նպատակին հասնելու համար ներդրվելու է նաև Վեոլիա Գրուփի համաշխարհային փորձը, տեխնոլոգիական լուծումներն ու Նոու-Հաուն:

Բարեփոխումների առաջին քայլը կառուցվածքային փոփոխություններն են: Ներկայումս ընթանում են կադրային փոփոխություններ, առկա թիմի վերապատրաստման, առաջնակարգ ու որակավորված մասնագետների ներգրավման աշխատանքներ: Այս ամենն իրականացվում է մեր քաղաքացիների և նրանց մատուցվող ծառայությունների ու սպասարկման որակի բարելավման համար:

Վեոլիա Ջուր ՓԲԸ